Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-298-15.07.2013-ԱՄ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ օրենք) 2-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1 հոդված.

«ՀՈԴՎԱԾ 2.1 ՊԱԼԻԱՏԻՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

Պալիատիվ բժշկական օգնությունը կյանքին վտանգ սպառնացող կամ անբուժելի հիվանդություն ունեցող հիվանդի և նրա ընտանիքի կյանքի որակի բարելավմանն ուղղված բժշկական օգնության և սպասարկման տեսակ է, որը նպատակ ունի մեղմել հիվանդի ցավը, տառապանքը և հիվանդության հետ կապված ֆիզիկական, սոցիալ-հոգեբանական, հոգևոր և այլ խնդիրները՝ դրանք վաղ հայտնաբերելու, գնահատելու և անհրաժեշտ միջամտություններ իրականացնելու միջոցով:

Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման չափորոշիչները սահմանում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը»:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հ/Հ	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արա Բաբլոյան, Ռուզաննա Մուրադյան	1. Հաշվի առնելով, որ պալիատիվ բուժօգնությունը բժշկական օգնության և սպասարկման տեսակ է, այլ ոչ թե բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ձև, առաջարկում ենք լրացումը կատարել <<Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>> օրենքի 2-րդ հոդվածում: Ուստի ներկայացված նախագծի 1-ին հոդվածում, առաջարկում ենք <<լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝3.1 հոդված>> բառերը փոխարինել <<լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝2.1 հոդված>> բառերով: 2. Համապատասխանաբար <<<Հոդված 3.1Պալիատիվ բժշկական օգնությունը և սպասարկումը>> բառերը առաջարկում ենք փոխարինել <<<Հոդված 2.1 Պալիատիվ բժշկական օգնությունը և սպասարկումը>> բառերով: 3.Առաջարկվում ենք օրենքի նախագծի փոփոխվող 2.1 հոդվածում <<ցավը>> բառը փոխարինել <<ցավը, տառապանքը>> բառերով:	1.Առաջարկն ընդունվել է: 2.Առաջարկն ընդունվել է: 3.Առաջարկն ընդունվել է:	1.Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: 2.Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: 3.Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն